ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻՑ

ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 18-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Դեկտեմբերի 7-ին, Սպիտակի ավերիչ երկրաշարժի 18-րդ տարելիցի կապակցությամբ, բազմամարդ էր Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու բակը: Հավաքվել էին մարզային, քաղաքային իշխանությունների պաշտոնատար այրեր, մշակույթի և արվեստի գործիչներ, մեծ թվով ուսանողներ և ընդհանրապես բոլոր նրանք, ովքեր իրենց հոգու պարտքն էին համարել այդ օրը նվիրել երկրաշարժի զոհերի հիշատակին:

Վանաձորցիները եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու և աղոթակիցը լինելու ահավոր երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին նվիրված Ս. Պատարագին և հոգեհանգստյան արարողությանը:

Հավարտ Ս. Պատարագի Նահատակաց պուրակում տեղադրված երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարի մոտ, Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի հանդիսապետությամբ, կատարվեց հոգեհանգստյան արարողություն, որին ներկա էին մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ: Հոգեհանգստյան կարգից հետո մեկ րոպե լռությամբ հարգվեց երկրաշարժի զոհերի հիշատակը: Այնուհետև, ըստ կարգուպատշաճի, խաչքարի մոտ զետեղվեցին ծաղիկներ և ծաղկեպսակներ: Հիշատակման համանման արարողություններ կատարվեցին նաև Սպիտակ և Ստեփանավան քաղաքներում:

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼՅԱՆԻ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԵԿԵՂԵՑՈՒՄ

Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի օրհնությամբ և Վանաձորի Ս. Աստվածածին եկեղեցու արական և Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի մանկական երգչախմբերի գեղարվեստական ղեկավար Սերժիկ Հարությունյանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 12-ին Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի եկեղեցու ներքնահարկ սրահում կայացավ համերգ-հանդիսություն՝ նվիրված մեծանուն երգահան Մակար Եկմալյանի ծննդյան 150-ամյակին:

Մակար Եկմալյանն առաջիններից էր, ով դրեց դասական հայ ժողովրդական-հայրենասիրական երգերի պահպանման, վեր հանման և աշխարհին ծանոթացնելու անգնահատելի գործի հիմքերը: Բազմաձայն Պատարագի մշակումը պատկանում է